

22 ՄԱՐՏԻ ՄԱՐԱՓՈՐՁ

ԴԱՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՍԸ ՕՐՈՎ ՅԵՏԱԶԳՈՒԵՑԱՒ

Լեոնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկարի Դուրախանյանի ղեկավարությամբ 22 Մարտի մահափորձին դատավարությունը տասը օրով լիարժեքացրեց:

Դատարանը այս օրոշումին յանգեցավ՝ ընդառաջելով մեղադրեալ Լեոն Միրզոյանի նոր պաշտպան փաստաբան Անտոնյանի թվարկմանը: Նոր պաշտպանը, որ նույն օրը երեւան էր Մտեֆանակերտ հասած ըլլալով՝ երկու շաբաթ ժամանակ խնդրած էր իր պաշտպանեալին նրկթերուն ծանօթանալու համար:

Դատավարությունը պիտի վերսկսի 23 Հոկտեմբերին:

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՓՈՓՈՔՈՎ

ՃՈՆ ՓՈԼ ԿԵԹԻ ՀԻՄՆԱՐԿԸ 25,000 ՏՈՂԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԷ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԵՅՐՈՒԹԻ ԾԵՄԱՐԱՆԻՆ

Համազգայինի ձեռնարկայիններու Ընկերակցության վարչությունը կը տեղեկացնէ, թէ Ճոն Փոլ Կեթի հիմնարկը 25,000 տոլարի նուիրատուութիւն մը կատարած է Համազգայինի Պէյրոուի ձեռնարկին, ձեռնարկանաբար դոկտ. Վարդան Գրիգորեանի փափաքով:

Գրիգորեան երեք շրջան (12 տարի) բեղուն գործունէութիւն ունեցած է Կեթի Հիմնարկին կազմին մէջ: Վերջին շրջանը աւարտելուն առթիւ, պատուելու համար Գրիգորեանի գործունէութիւնը, Կեթի հիմնարկը կատարած է այս նուիրատուութիւնը անոր նախասիրած միտքեան՝ Համազգայինի Պէյրոուի ձեռնարկին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԿԸ ԲԱՐԵՓՈՒԷ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

Հայաստանի Ազգային Ժողովը 11 Հոկտեմբերին որդեգրեց զինուորական ծառայութեան մասին օրէնքին բարեփոխումը, ըստ որում, զինուորական նրկթերուն այն շրջանաւարտները եւ բժիշկները, որոնք պաշտպանած են իրենց աւարտածները, ազատ կը կացուցուին զինուորական ծառայութեան:

Նշենք, որ որդեգրուած բարեփոխումը հովանաւորւած էր Ազգային Ժողովի գիտութեան, կրթութեան, մշակութի, երիտասարդութեան եւ պաշտպանութեան յանձնարարութեան կողմէ:

ՄԱԿ ԵՐԱՇՏԷՆ ՎՆԱՍՈՒԱՍՆԵՐՈՒՆ ԿԸ ՅԱՏԿԱՅԼԷ ՊԱՐԷՆ ԵՒ ԴԵՂՈՐԱՅԸ

ՄԱԿի Հայաստանի ներկայացուցչութեան տարեկան օգնութեան շրջագիրին մէջ, Ֆինանսական միջոցներու վերադասարկման հաշուին կը նախատեսուի 9,9 միլիոն տոլար յատկացնել երաշտին վնասուած շրջաններուն պարենային օգնութիւն կազմակերպելու համար, որմէ 4,7 միլիոն տոլարը՝ «Մոնոնոլ աշխատանքի ղիմաց» ծրագիրով, 5,2 միլիոն պարենային օգնութիւն:

Ըստ Հայաստանի զինուորական նախարարութեան արտադրութեան վարչարանի վարչութեան, ատկէ գատ, նախատեսուած է նաեւ 4,5 միլիոն տոլարի ղեկորայք յատկացնել երաշտին վնասուածներուն:

ՌՈՐՈՍ ՈՍՆԻՆ ԿԵՐՊ. ԱԿԱԴԵՄԻԱ ԸԱՍԱԶԳԱՅԻՆԻ Լ. ԶԱՆՈ ԿԵՂՈՆ

2000-2001

- **ԱԿԱԳԵՄԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՍԱՆՈՑ**
Օր.- Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի Ժամ.- 4:00-6:00
Վերանու. - 17 Հոկտեմբեր 2000
- **ՊԱՍԱՆԻՆԵՐՈՒ ԶԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԸ**
Օր.- Ուրբաթ Ժամ.- 4:00-6:00
Վերանու. - 20 Հոկտեմբեր 2000
- **ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԱԿԱՆ ԶԱՐԱԹՐՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՅԸ**
Օր.- Շաբաթ Ժամեր
10:00-12:00
12:00-2:00
2:00-4:00
Տարիք
4էն 7
7էն 10
10էն 13
Վերանու. 21 Հոկտեմբեր 2000

Յատուկ գին առաջին 25 արձանագրուող աշակերտներուն:

Թ. ՌՈՍԻՆԻ ԿԵՐՊ. ԱԿԱԳԵՄԻԱ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍՔԷՄՊՐԻՃԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Օրջանի եւ Քանադայի Ազգային առաջնորդարանը Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հրդեհակման 1700ամեակին առիթով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսի այցելութեան ընթացքին Արամի ունեցած էր Աստի Բեմարիսի հայ գաղութը: Տիրոջ ղեկավարութեամբ ճամբուն վրայ, 11 Հոկտեմբերին Բեմարիսի հայ համայնքը եւս առիթը ունեցաւ վեհափառի նախագահութեամբ բացուած յայտարարելու 1700ամեակի ձեռնարկները՝ իրենց ծիսական կեանքէն անդ:

Քանադայի սահմանին վրայ Արամ Ա. կաթողիկոսը դիմարտեց իր կեանքէն թորոնքի Ա. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ծառէ Ծ. վրդ. Փանտեան, Բեմարիսի հոգեւոր հովիւ Վարդան քհնյ. Պետրոսեան, ազգային մարմիններու ներկայացուցիչներ՝ Թորոնքիէն ու Բեմարիսէն եւ յուր մը հայրորդներ:

Այնուհետեւ Արամ Ա. կաթողիկոս ուղեւորուեցաւ դէպի Բեմարիս, որուն Ա. Նշան եկեղեցւոյ մուտքին տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն: Վեհափառը իր պատգամը ուղեղէն անբարեկամութեամբ ընդունաւ՝ զանախտելով անոնց կապուածութիւնը եկեղեցւոյ կեանքին ու ազգային արժանիքներուն:

Բեմարիս այցելութեան ժիրէն անդ վեհափառը հանդիպում մը ունեցաւ երիտասարդներուն եւ պատանիներուն հետ: Վեհափառը պատասխանեց երիտասարդութեան բոլոր հարցումներուն, որոնք կը վերաբերէին Հայ եկեղեցւոյ առաքելութեան եւ սեր ազգային արժանիքներուն ու սովորութիւններուն:

Իր հայրապետական պատգամներուն ընթացքին, ամէն տեղ, վեհափառը կարեւորութեամբ ճշեց, թէ - 1700ամեակը բոլորէն աւելի մեր նոր սերունդին համար է, անոր եկեղեցական, հոգեւոր ու ազգային յատկանշականութեան գարկ տալու համար է, զայն մեր դարարար արմատներուն հետ հաղորդ դարձնելու համար է:

Նոյն օրուան երեկոյն Ժամը 8:30ին Բեմարիսի - Հայ կեղեցւոյ-ի սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ մը՝ ի պատիւ Արամ Ա. կաթողիկոսին: Իր հայրապետական պատգամով վեհափառը քաջալերեց Բեմարիսի փոքրաթիւ համայնքը՝ եկեղեցւոյ եւ հայ համայնքին շուրջ բոլորուած մնալու կոչ ուղղելով բոլորին:

Ես հայ չեմ համարել ան, որ հայութեան կեանքէն, հայ եկեղեցիէն ու հայ

ՎԵՆԱՓԱՈՒՆ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Հինգշաբթի, 12 Նոյեմբերին, Արամ Ա. կաթողիկոս այցելեց Թորոնքո: Վեհափառին կ'ընկերակցէին Արեւելեան Ամերիկայի եւ Քանադայի թեմի առաջնորդական փոխառորդ խմբակ եպս. Յակոբեան, Գրիգոր վրդ. Չիֆթեան եւ Արեւելեան թեմի Ազգային Վարչութեան ներկայացուցիչ անդամներ:

Թորոնքոյի Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ վեհափառը ժողովրդային դիմարտութեամբ արժանացաւ: Ներկայ էին պետական մարմիններու ներկայացուցիչներ եւ հարիւրաւոր հաւատացեալներ, ինչպէս նաեւ Քանադայի Էջմիածնական թեմի առաջնորդ Յովնան արք. Տերտերեան:

Արամ Ա. կաթողիկոս այցելութիւն մը տուաւ Թորոնքոյի Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) ամէնօրեայ վարժարանը: Այնուհետեւ, վեհափառը - Հայ կեղեցւոյ-ին մէջ բացումը կատարեց - Հայկական Կիլիկիոյ-ն ներկայացուցիչ լուսանկարչական ցուցահանդէսին, եղաւ Հայ երեցներու Ընկերութեան հետ եւ ապա հանդիպում ունեցաւ գաղութի զանազան միութիւններու եւ կազմակերպութիւններու վարչական կազմներուն հետ:

Որքաք. 13 Հոկտեմբերին, Թորոնքոյի Անկիթքան համայնքի ԱՆՏՐ ՄԵՋՄԱՍԻԱՆԻ մէջ տեղի ունեցաւ միջեկեղեցական արարողութիւն մը՝ նախագահութեամբ Արամ Ա. կաթողիկոսին եւ մասնակցութեամբ Թորոնքոյի անկիթքան արքեպիսկոպոս Յիմարի եւ օտար եկեղեցիներու ներկայացուցիչներուն:

Վեհափառը շեշտեց հայ ժողովրդի կեանքին մէջ հայ եկեղեցւոյ ունեցած որոշադրիչ դերակատարութիւնը, եւ ընդհանրապէս պատմութեան ընթացքին հայ ժողովրդի քրիստոնէական կեանքի վկայութիւնը:

Եկեղեցական արարողութեան շարականներու մեծերգներով իր մասնակցութիւնը քերաւ երգչուհի Իզապէլ Պայրազարեան:

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊՈՅՏ ՄԶԿԻՈՐ ԿԸ ՎԵՐԱՆՈՐԳՈՒԻ

17 Օգոստոս 1996էն ի վեր Հայաստանի մէջ Իրանի դեսպանատան միջոցներով կը վերանորոգուի երեւանի Մաշտոց պողոտային վրայ գտնուող Կապոյտ մզկիթը: Ան կառուցուած է 1765ին, սակայն տարիներու ընթացքին քանդուելով՝ ներկայիս մնացած է անոր հիմնական կմախքը:

Մզկիթին վերանորոգման աշխատանքները միասնաբար կը կատարուին իրանցի եւ Հայաստանի ճարտարապետներու կողմէ: Վերանորոգման համար Իրանի կառավարութիւնը մինչեւ հիմա ծախսած է մէկ միլիոն տոլար:

Ըստ Իրանի դեսպանատան, մզկիթը հաւանաբար վերաբացուի 2001 թուականին:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՈՂՋԱԲԵՐԴ ԳԻՒՂԸ՝ ՎՏԱՆԳԱՒՈՐ ՄԱՀԱՆՔՆԵՐՈՒ ԵՆԹԱԿԱՅ ՏԱՐԱԾՔ

Հայաստանի շուրջ 65 հազար հեկտար ընդգրկող աւելի քան երեք հազար սահմանի ենթակա վայրերու եւ բնակարանային երեւոյթներու պատճառով վնասին չափը տարեկան կը կազմէ մօտ 23 միլիոն տոլար: Այդ շրջաններուն մէջ գտնուող բնակավայրերէն (Ողջաբերդ, Հաղարծին, Գոշ, Գեղիկ, Օծուն, Դասակերտ) ամենէն վտանգաւորը Կոտայքի մարզի Ողջաբերդ գիւղի սահմանի ենթակա շրջանն է: Հայաստանի կառավարութիւնը քանի մը անգամ անդրադարձած է Ողջաբերդի վտանգուած տուններէն բնակչութիւնը տեղափոխելու հարցերուն, որոնք սակայն ֆինանսական միջոցներու անբաւարարութեան պատճառով իրագործուած են մասնակիօրէն:

Ըստ Հայաստանի արտակարգ իրավիճակներու վարչութեան հասարակական կապերու եւ լրատուութեան բաժնիին, վարչութիւնը դիմած է կառավարութեան խնդրելով յարող տարուան պետական պիտուէին մէջ կեդտի առեւտրի սահմանէ վնասուած բնակչներուն հատուցում տալու հարցը, իսկ Կոտայքի մարզային իշխանութիւններուն դիմած է, որպէսզի ապահովեն փոխհատուցում ստացած, բայց տակաւին չտեղափոխուած բնակչներուն վերաբնակեցումը:

ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ ԲԱԹԱՐԱՔԹԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՒ ԲՈՒԺՄԱՆ ԿԵՂՈՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ

Երեւանի Ս. Մարկեանի անուան հանրապետական ակնբուժական դարմանատան մէջ բացուած կատարուած աշխի հիւանդութիւններու մէջ բաւական տարածուած քաթարաթիւ ախտորոշման եւ բուժման նոր կեղրնին:

Ակնբուժական կեղրնի տնօրէն Ալեքսանդր Մարկեան նշեց, թէ ժամանակակից սարքաւորումներով օտուած այս կեղրնին համար իրենք երախտապարտ են բժիշկներու ամբիկակեան ընկերութեան, Սփիւռքին եւ Հայաստանի առողջապահութեան նախարարութեան: Ան յատկապէս անդրադարձաւ ամբիկակահայ ակնբուժ Ինժըր Յովհաննէսեանի ղեկին, որուն օգնութեամբ կեղր տարի առաջ աշխի հանրապետական դարմանատան մէջ բացուեցաւ վիրթուաթիւ կեղրոնը, ուր շողարձակումով կը կատարուի աշխի յատակի բուժումը:

ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅԻՆ 375 ԱՇԿԵՐՏ ԵՒ ՈՒՐԻՇՆԵՐ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՕՃԱԽՆԵՐԷՆ ՀԵՌՈՒ

Գրացուհիս, մատամ ժողեֆինը, որ տեղական վարժարանի մը մէջ ռուսացուհի է, ուրախութեամբ հաղորդեց ինձի:

- Գիտե՞ս, որ մեր դպրոցին մէջ 375 հայ աշակերտ արձանագրուած է: Ունեւոր ընտանիքներու գաւակներ են կարծէք:

Սուրբի պահուած փախուղ արտասանուած այս խօսքերը մոռցնել տուին սուրճին քաղցր կամ լեղի ըլլալուն մասին արտայայտուելու ընկալեալ խօսքերը: Երբ լուսթիւնս երկար տեւեց, ռուսացուհին շարունակեց.

- Շարաթը մէկ անգամ կէսօրէ ետք մը հայերէնի դասաւանդութիւն պիտի սրուի փափաքով հայ աշակերտներուն:

- Լաւ միջոցառում է,- ըսի գէթ պատասխան մը տալու համար վաստակաշատ ռուսացուհիին զրոյցին: Յետոյ ան շարունակեց իր միտքերը բացատրել հայ աշակերտներուն ընդունակութեան, մտային կարողութեանց մասին՝ հիմնուելով անցնող տարիներու իր փորձառութեան վրայ:

- Լուրջ աշակերտներ ունիմ, մեծ մասամբ փայլուն նիշեր կը ստանան: Թէեւ կան բացառութիւններ թող ու սովոր, բայց կը ջանանք մեր կարելին ընել բարեփոխելու համար այդպիսիներուն ռուսամտական վիճակը: Երէկ նոր աշակերտ մը ունեցայ, որ սխուր աղջնակ մըն էր. մայրը մօտեցաւ ինձի ու ըսաւ.

- Խնդրեմ, մատամ ժողեֆին, աղջկանս ուշադրութիւն ըրէք, դժուար էրի: Զէր ուզեք բաժնուիլ իր նախկին հայկական դպրոցէն...

- Հոգ մի՛ ընէք, սիկին, արդէն հարիւրաւոր հայ աշակերտներ ունինք, քանի մը օրէն կը վարժուի, կը սիրէ մեր միջավայրը...

ՎԵՐԱՄՈՒՄ, ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԻ ՀԱՐԱԹ, ԹԱՐԳՄԱՆՅԱՅ յԻՆՏԱՍԿՈՒԹԻՒՆ:

Ուր մնաց յարգանքը՝ հանդէպ մեր մշակութային արժեքներուն: Հայ աշակերտին կամքը բնաւարուած է իր ծնողաց կողմէ իսկ: Ան ազատ չէ իր սիրած դպրոցը երթալու, դպրոց, ուր կը բարձրաւոր հայոց լեզուն, ուր կը ծանօթանայ վերամուսկի ստաշին օրէնքին (Մեքայի Մաշտոցի աստուածային դիւտին, հայոց ալուրեւնի հրաշքին, ուր կը բացատրուի ու կը փառաւորուի ոսկեղնիկ ՈՍԿԵՂԻՍԻ: Հազար ափսոս մեր զրկուած, զաւակներուն...)

Ըսելու հարկ չկայ, բազմիցս վկայած ենք մեր մարդասիրութեան մասին, բարձրաձայն արտայայտուած ենք դէպի օտար լեզուներ եւ գիտութիւն, դէպի նոր հնարներու բացուելու մեր լուսամիտ արամադրութիւնը, բայց յանկարծ մեր դէմ կ'ելլէ անհաճ Յակոբ Պարոնեանն ու մեզի կը յիշեցնէ մեր օտարամոլութիւնը... Այո, հայուն միտքը բացուած է ընկալելու աշխարհին լոյսը, բայց մեր մէջ ներկայ է միշտ միւսը՝ օտարամոլը, որ կը խախտէ, կը խանգարէ մեր ազգային ինքնատիւնը:

Եկէք միասնաբար մտածենք մէկ օտար վարժարանի մէջ 375 աշակերտի ներկայութիւնը: Ու ըստ մատամ ժողեֆինին փոխանցած «ներքին մանրամասնութիւններուն», այդ «մեծատուն» վարժարանները բաց կ'ընթանան իրարմը սակերու գունարներէն, իւրաքանչիւր ծանկերտէն կը պահանջեն «տոնասիւն» (նուիրատուութիւն), որ պէտք է ըլլայ զոնէ հազար տոլար... Սրտի ճմլում առթիւ վիճակներու մասին կ'անդրադառնանք ակամայ, որովհետեւ հայկական վարժարանները մնացած են անտէր, իսկ հայ ծնողները երես դարձուցած են իրենց գաւակներուն հայեցի դաստիարակութիւն փոխանցելու հիմնական սկզբունքներն՝ ոտնակոխելով հայ ծնողներ վիճակուած նուիրական առաքելութիւնը:

Մեր դպրոցները պիտու է մեծ լայն ունեցան, նոյնիսկ հայկական վարժարան մըն ալ փակուեցաւ, որովհետեւ կարելի չեղաւ գոյացնել հարկ եղած պիտուէն, ռուսացիներու ամաթոշակները կարելի չեղաւ վճարել ճիշդ ժամանակին, որովհետեւ մեր հարուստ դասակարգը (բացառութիւնները միշտ յարգելի են) չկատարեց իր խղճին պարտը:

Քաղցրեփութիւնը բունած է մեր ձեռքէն ու մեզ կը տանի դէպի օտարացում, այսինքն՝ ձուլում... Ու այս Լիբանանի նման հայոստ գաղութի մը մէջ:

Բայց մենք չենք յուսահատուած: Եթէ հայ դպրոցին հետ սրտակից հայ ծնողներուն թիւը նուազած ըլլալի, դարձեալ չենք յուսահատուի, որովհետեւ իրականութիւն է, թէ ԲԻՋԸ կ'առաջնորդէ զանգուածը: Ու այդ ԲԻՋԸ թիւի նկատուածը մեր թիւումն է՝ ազգային կեանքը համեմող, մեր ՕՐՈՒԱՆ ՀԱՅԻՆ ՀԱՄ ՏՈՒՆՈՂ:

Արտաքին խարուսիկ երեւոյթներու փայլէն խարուած հայ ծնողներ պիտի ափսոսան ուշ կամ կանուխ իրենց գործած մեծ մեղքին համար:

Հայկական ազգային վարժարանները հպարտ են իրենց աշակերտութեանը, տնօրէնութեամբ եւ ռուսացիական կազմերով, որոնք կը շարունակեն մեքայաշունչ ոգեկանութեամբ հայկերտուելու վսեմ գործը: Նաեւ հպարտ են մեր ազգային վարժարանները, որոնք մեծ թիւով աշակերտներու յաջողութիւն կ'ընձեռեն պետական ընտելութեանց մէջ, օտար լեզուներու եւ մշակոյթի մասին իրենց գիտութիւնը եւս բարձր պահած:

Չտեսի հոգեբանութեամբ, «ամէն փայլուն երեւոյթ ոսկի կարծող» մեր յանցաւոր ծնողներուն կեցուածքին համար կը ցաւալինք:

Ու որքան ալ հարուստ են ՀԱՅ ԴՊՐՈՅԸ, նրկթապէս եւ բարոյապէս, ան պիտի շարունակէ իր հայկերտուածի երթը՝ փառաւորելով հայոց լեզուն, հայոց պատմութիւնը, հայոց մշակոյթը:

ԱՐՑԱԽՆ ԻՐ ՈՐՂԻՆԵՐԻՆ ՏՈՒՆ Է ԿԱՆՉՈՒՄ

Այսօր մէկ միլիոնից աւել զարարող-ցիներ են ապրում զրոսում:

Արամը հայրական տան կողմը նայել չի կարողանում, ամաչում է... Աչքին կատկերում է հօր ղէմքը, հայեցքում՝ նախատինք. «Ինչո՞ւ անտէր թողեցիք սուսնս... ո՞ւր էք, որտե՞ղ էք, ո՞ւր...»:

Երեք եղբայր «շահացան» թուզին պէս թանհեղձներ, օտար փերերում, օտար երկրներ տակ տուն շինեցին... Հօր մահից յետոյ մայրը շատ թախանձեց, որ գոնէ նրանցից մէկը վերադառնայ, տիրու-թիւն անի հայրական տանը, շարունակի իր օճախի ծուխը՝ ապրողին: Մասն էլ մահականացու էր, մի օր հողին առանդեց Աստուծոն: Իսկ սուսնը, հայրական օճախը...:

Հիւսիսային Կովկասի քաղաքներից մէկում Արամն ունի երեք բաղնիք: Պուլ-պուլաւարով՝ կտրիւմ տղաներ: Ազգան-ւան վերջին վանկը «եան», անուններն էլ՝ Հալկ, Յակուր, Յարուժ եւ... հայերէն մի բան չգիտեն: Ապրում են անհող, հարուստ՝ նորածնե, յաճախում շարժա-պատկերի սրահ, թատրոն, ճաշարան, սրճարան, ունեն սեփական ինքնաշարժ-ներ... Լաւ մասնագէտներ են, լաւ էլ վաստակում են: Նրանք իրենց համար կան, իրենց կեանք սուսած ազգի համար ոչ: Օտարի հողը չի վառում նրանց ոտ-քերը, կ'այլընդ, եթէ մի օր ճիգ անէին զգալու իրենց արմատը... Հալկ: Այդ-բանից յետոյ ուղքեր են նրանք: Միայն փաստաթղթերով, անուն-ազգանունամբ հայ կոչուելը քիչ է հայ լինելու համար: Եւ ի՞նչ կը լինի նրանց ապագայ որդիներ-րի, թուուներին են: Նրանք կամաւոր իրենց տալիս են սպիտակ եղեւնի բե-րան...:

Մեր ազդի ճակատազրի դիմեմու-թեան, թէ՛ պատմութեան անողորմ ու շարունակական ինկոյլիսի կործանարար արհաւիրքների պատճառով, հայերը սփռուել են աշխարհով մէկ: Դա դատը ճշմարտութիւն է: Ճշմարտութիւն է նաեւ, որ այսօր Արցախի տարածքից դուրս ապրում են մէկ միլիոնից աւելի զարարողացիներ, որոնք տարիներ ընթացքում Արամի պէս թողել են հայրական տունը, յուշէ հեռուներ, գտել մի տաքուկ ան-կիւն ու մտապէլ հայկական քաղցրա-բարբառ լեզուն, նիստ ու կացը:

Այսօրուան մեր կեանքի արհաւիրքնե-րին շատերը չլիմտացան: Նրանք թողեցին տունն ու տեղ, հեռացան հայրենիքից, հե-ռուներում գտան խաղաղ մի ապաստան եւ մտապահ յետադիմ ճամբան: Ու այ-սօր էլ նրանք ինչ-ինչ ճանապարհներով քաշում-տանում են Արցախում մնացած իրենց բարեկամներին, ընկերներին: Այո, քիչ չեն նրանք, որոնք Արցախից հե-ռանալու ելք են փնտրում: Հեռանալ Ար-ցախից ու այլեւս չվերադառնալ՝ համա-գօր է դասալքութեան: Ճիշդ է, ամէնուր մեզ հայերիս, տաղանդաւոր ու շինա-բար են կոչում... Մի թէ՛ բաւական չէ ինքնա ծառայել երեք ուրիշի զրոշների ներքոյ, արարել, ստեղծել: Մի թէ՛ բաւա-կան չէ, որ օտար փերում շինել, կա-ռուցել եմք... Ո՞ւմ համար եմք կառու-ցել եւ ինչո՞ւ... Կառուցել ենք Պաքու, Գանձակ, Սուսկալիթ, Մինկեչուուր... Սակայն դրանք ո՞ւմ են մնացել...:

Տասնամեակներ շարունակ բարոյա-կան կտտանքներ ինթրալուսած եւ տնտեսագէտ կեղեքուած մեր փոքր Ար-ցախը այսօր արբան զնով ձեռք է բերել իր անկախութիւնը: Այդ անկախութիւնը պէտք է ամրապնդել հայրողիների միաց-եալ ուժերով, օտար եգերներում սփռուած գաւակներ թողնելով: Այ-սօր Արցախում քաջբալուած ու լիովին լքուած են շատ գիւղեր: Կան նաեւ գիւ-ղեր, որ քաջբալման երկին են կանգնած: Խիտ պակասել է գիւղական բնակիչնե-րի թիւը: Ինչքան ծերացած ծնողներ են սպասում իրենց որդիների վերադարձին: Արցախն օտար փերում սփռուած իր որդիներին սուսն է կանչում: Պէտք է լաւ իմանալ, որ հայրենի հողի բարբառաճու-մը, նրա շէնացումը պայմանաւորուած է այդ մտրորուած որդիներ լվերադար-ձով: Տունն ամուր է լինում իր գաւակ-ներով: Արցախը սպասում է համոզուած է, որ նրանք կը վերադառնան եւ տիրու-թիւն կ'անեն իրենց հայրական տներին, անձնական ներդրումը կ'ունենայ մեր Արցախ նախարհի հետապալ զարգաց-ման, նրա ամրապնդման գործում: Ար-ցախը սպասում է Պաքուի, Սուսկալիթի, Ազրպէյճանի միւս քաղաքներից ու այլ բնակավայրերից թուրք յետուզակներ ճանկերից փախած. դունէլուս կանծ իր հայ գաւակներին: Չէ՞ որ նրանք հիմնա-կանում արցախցիներ են, նրանցից ամէն մէկը Արցախում ունի իր գիւղը, իր սու-սնը, իր պապերի գերեզմանները, իրենց արմատները... Մենք նրանց չենք ուզում փախտականներ կոչել: Արցախ վերա-դարձողներին մենք հայրենադարձ ենք կոչում:

Այսօր Հիւսիսային Կովկասի հայկա-

կան համայնքներին կից ստեղծուել են «Արցախ» հայրենակցական միութիւն-ներ, որոնք հաւաքագրում են Արցախից տեղահան եղած հայերին, օգնում նրանց վերադառնալու հայրենի օճախները: Միայն կրասնուտարի երկրամասի եւ Ա-զով-Սեւծովեան հայ համայնքների հա-մակարկի խորհուրդներ իւր անց կից «Արցախ» հայրենակցական միութիւննե-րի օգնութեամբ 1996 թուականի Յունե-ւարից մինչեւ 1998 թուականի Նոյեմբե-րը Արցախ, իրենց հայրենի օճախներն են վերադարձել 200ից աւելի արցախցիներ, հիմնակառու՝ Մարտակերտի շրջանից: Այո, սկսուած է վերադարձը: Սակայն դեռ շատ քիչ են վերադառնում: Այսպէս, Նովոբրուսկը քաղաքում ու նրա յարակից աւաններում ու գիւղերում՝ հազարից ա-ւելի տեղահան եղած հայեր են բնակուած: Ճիշդ է, նրանք վերադառնում են, բայց... հիմնականում վաթսուսն անց տարիք ունեցողները: Չգիտեմ ինչու երի-տասարդներ չեն ուզում վերադառնալ Արցախ: Նրանք այդ օտար փերում, օտար երկրներ տակ կատարում են ամէն տեսակ սեւ աշխատանք, զբաղւում «մա-քք» առեւտրով, յարմարուած տեղի բարձրներ: Գուցէ նրանք վարենում են մեր պաշարի «աղմուկից», վախենում են, որ նորից պատերազմ վերսկսուի Ար-ցախում եւ իրենք ստիպուած կը լինեն նորից փախուստի արժանութիւնը: Ուր է նրանց նախնիների արութիւնը, խիզա-խութիւնը եւ վերջապէս տղամարդու ամաչակաւորուած մեր Արցախաշխար-հի կանանցից, որոնք իրենց ամուսիննե-րի, եղբայրների ու տղաների հետ կողք-կողքի մարտնչում էին, խիզախօրէն պա-հում մեր հայրենի հողը: Ձէ՞ որ Արցախի իրենց համարիքն է: Իսկ հայրենիքն ամէնքիս համար սկսուած է պապենական օճախից, մեր բակից, մեր գիւղից, հանդ ու չոլից: Արցախցին այս օրերին իրա-ւունք չունի ուրիշ տեղ ապրելու, միայն իր ֆիզիքական գոյատեւման մասին մտածելու: Պէտք չէ ժամանակաւոր դրժ-ւարութիւններից յուսահատ լինել, դա-տապարտել շարժման առաջամարտիկնե-րին եւ շարունակ փառարանել անցած օրերը: Այո, նման մարդիկ դեռ կան: Այ-սօր կարեւորը եւ ամենազլխաւորն այն է, որ մենք ձեռք ենք բերել մեր անկա-խութիւնը: Դա փաստ է: Ծատ հաւանա-կան է, որ արբան զնով ձեռք բերուած մեր այս անկախութեան ամրապնդման ճանապարհին եւ դժուարութիւնների եւ զրկանքների դեռ շատ կը հանդիպենք: Այդ ամէնից պէտք է պատրաստ լինենք, կարողանանք դիմանալ:

Այսօր մեր Արցախ աշխարհում խաղա-ղութիւն է տիրում: Այդ խաղաղութիւնը մեր անվտանգութիւնը պաշտպանում են Արցախի պիտուած ուժերը: Գիշեր ու ցե-րեկ լարուածութեան մէջ են մեր քաջ տը-ղաները, սկսած շարքալին գիւնուորներից մինչեւ հրամանատարները: Մեր սղանե-րը միշտ պատրաստ են ամուր պահել մեր անկախութիւնը: Մենք պէտք է նոր շունչ տանք Դիզակի, Վարանդալի, Սաչինի, Ջրաբերդի, Գուլիստանի՝ մեր պատմա-կան աշխարհին, մեր նորից ծաղկեմ մեր գիւղերի ու աւանները, մեր քաղաքները, նորից մանկան ծնունդ լինի, անքանակ օրօրացներ լինեն, բազում հարսանիքներ, որպէս ապացոյցներ յարասեւութեան: Անդրադառնալով մեր հայ կանանց, կը ցանկանանք, որ նրանք շատ գաւակներ պարզ եւ են Արցախ աշխարհին: Ազգի ապրում է իր ծնունդով: Ազգի օրհասա-կան պահին միշտ պաշտպան են եղել հայ զարմանահրաշ դուստրերը: Ուրեմն, լաւ իմացք, իմ ազգի դուստրեր, Արցախի անկախութեան համար նահատակուած մեր քաջողիներ թիւը դուր պէտք է վե-րականցնէք: Եթէ դուք բաւարարուել էք ձեր ունեցած երեխաների թիւով, ապա որպէս նուէր մեր ազգին մէկական գա-ւակ եւս պարգեւէք:

Եւ վերջում նորից ձեռք եմ դիմում Ար-ցախից հեռացած հայ գաւակներ, վերա-դարձէք պապենական ձեր օճախները, նոր սուսն հիմնէք, հայրերէն մտածող ձեր որդիները թող խօսեն հայերէն, յաճախեն հայկական դպրոց: Օտարութեան մէջ գտնուող Արցախի հայրերն որդիներ, եղէք ձեր ապոււպայերի արժանի յետ-նորդներ, ուղղէք հայրենիքից հեռացած-ների սխալները եւ օտար փերից սուսն վերադարձէք:

Մենք մեր Արցախ աշխարհում պէտք է շատանաք եւ բազմանանք... Մենք պէտք է յարատեւենք:

ՏԻՆՈՆ ՍԿՐՉԵԱՆ

Պատմաբան-լրագրող, «Ստեփանակերտ» թերթի գլխավոր խմբագիր

«Երկիր»

Այն, որ պաշտօնակա Ազգաբան է Պաքու ընճա-դատութեան են ներառւում Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան կողմից Հայոց Յեղասպա-նութեան ձանաղան մասին բանաձեւը, ինչ-որ տեղ հասկանալի է ու բնական: Սակայն առնուազն տար-րինակ է, երբ Նոյնպիսի գործելաձ են ընտրել նաեւ մեր որոշ քաղաքական գործիչներ եւ լրատուամիջոց-ներ:

Նման երեւոյթների, կարծում ենք, պակաստես չէինք լինի, եթէ օրէնսդրօրէն պաշտպանուած լինէն մեր ազ-գային շահերն ու նպատակները, ինչի վերաբերել «Հայոց Աշխարհ»ի թղթակից խնդրանքով իր նկատա-ռումներն է ներկայացնում Ազգային ժողովի իրաւա-բանական ծառայութեան ղեկավար Վլատիմիր Նազար-եանը:

ՀԱՐՅՈՒՄ. Որքան էլ զարմանալի է, բայց Հայաստա-նի իշխանութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան հարցի բարձրագումը միջազգային առեւանգում եւ որս բննարկման առարկայ դառնալը Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան մէջ բննադատութեան է արժա-նանում նաեւ մեզանում: Չոր կարծիքը: ՊԱՍՄԱՍԱՆ. Պետութիւնը ինքնամպատակ չէ, ժողո-վուրդներ ստեղծող են իրենց պետութիւնները, որպէս-զի այն իրականացնի ժողովրդի իղծօրը, ցանկութիւննե-րը, որպէսզի պետութեան օգնութեամբ մարդիկ ապրեն ազատ, անվտանգ, բարեկեցիկ եւ արժանապատիւ կեան-քով: Իսկ արժանապատուութիւնը, իմ համոզմամբ, հայի համար ներառում է Յեղասպանութեան ճանաչումը մի-ջազգային համաձայնագրերի լիովին համապատաս-խան: Եւ այս առումով համամիտ եմ մեր պետական այ-րերի մտառեմը, որ դա ամենեւին էլ չի նուստապնում, այլ հակառակը մնամ պաշխարհանք կը բարձրացնի թուրք ժողովրդի պատիւը, ճիշդ այնպէս, ինչպէս գեր-մանացիների հետ կատարուեց:

Մեր գործով սահմանադրութեան մէջ առանձին դրոյթ Յեղասպանութեան մասին չկալ. գիտեք այն ժամանակ-ւա իշխանութիւնների մտեցնումը այդ հարցի վերաբեր-եալ: Ուստի յղում եմ իրենց պետութեան մասին հոչակագրին, որտեղ Յեղասպանութեան միջազգային ճանաչմանը հետամուտ լինելով վերաբերեալ կայ յա-տուկ կէտ: Ի դէպ, դա իրաւագիտութեան մէջ ընդունուած հնարք է. օրինակ Ֆրանսայի սահմանադրութեան մէջ որեւէ խօսք չկայ մարդու իրաւունքների մասին, այլ միայն յղում են կատարել մարդու իրաւունքների մասին 1789 թուականին ընդունուած հոչակագրին եւ դրանով իսկ այդ հոչակագիրը համարում է Ֆրանսայի սահմա-նադրութեան բաղկացուցիչ մասը: Այս տեսակիւնից ճիշդ կը համարէի. որ ինչպէս Ֆրանսայի սահմանադրու-թիւնն է իրատարակում Մարդու իրաւունքների հոչա-կագրի հետ միասին, մերն էլ տպագրուի Հայաստանի ան-կախութեան հոչակագրի հետ միասին:

Հ. - Կարծիքներ են հնչում, որ եթէ Միացեալ Նահանգ-ները եւ Հայաստանը շարունակեն հետամուտ լինել Յե-ղասպանութեան միջազգային ճանաչմանը, ապա զե-կարող է վատթարացնել հայ-թուրքական յարաբերու-թիւնները: Անկեղ. կարող է կրկնուել դարասկզբին տեղի ունեցած ռդերդրուցները:

Պ. - Քաղաքականութեան մէջ գուշակութիւն կատարե-լը այնքան էլ նախանձելի գործ չէ. օրինակ, 1988 թուա-կանին ոչ ոք չէր կարող կանխատեսել, որ երկու տարի յետոյ Խորհրդային Միութիւնը վերանալու է, անգամ ամե-նահանճարեղ կանխագուշակողներն ու խորհրդային Միութեան ղէմ պայքարողները: Այնպէս որ կանխտե-սումներ անել չեմ պատրաստուի: Կարող եմ միայն ասել, որ թուրքիան ձգտում է դառնալ քաղաքակիրթ երուպա-յի ընտանիքի անդամ, իսկ դրա համար պէտք է գործի քա-ղաքակրթութեան շրջանակներում: Եւ եթէ հայ-թուրքա-կան յարաբերութիւնները վատանան, ապա դա առաջին հերթին կը վնասի հե՛նց թուրքիային:

Իսկ այն, ինչ տեղի է ունենում Միացեալ Նահանգնե-

րի Քոնկրետում, դա իրենց ներքին գործն է: Այն մարդիկ, ովքեր գտնում են, որ դա կը վնասի Ամերիկայի շահերին (*խօսքը վերաբերում է Հայաստանի քաղաքացիներին - Մ. Տ.*), թող փորձեն ազդել Միացեալ Նահանգների քոնկ-րետակնների վրայ. մեզ ինչո՞ւ են ասում, ի՞նչ է, մե՞նք ենք ընդունում այդ օրէնքը: Հասցետեղը սխալ է որոշ-ւած. թող մասնակ գրեն Միացեալ Նահանգների Քոնկրե-սին եւ իրենց «թանկարժէք» մտքերը յայտնեն Ներկայա-ցուցիչների Տան նախագահին:

Դեմ արտայայտուողների պարզապէս ուզում եմ մէկ հարց տալ 10 տարի, որ Յեղասպանութեան միջազգա-յին ճանաչման հարցը չէինք բարձրացնում, ինչպիսի՞ ձեռքբերումներ ունեցանք, սա չի՞ մեր ունեցածը, սրա-ցից վտար ո՞րն է լինելու: Աչքներս փակում էինք, պահստից խաղում, տպաւորութիւն ստեղծում, թէ ցե-ղասպանութեան մասին ընդհանրապէս չի կարելի խօսել կարդիմքը ո՞րն է... Այս պատմութիւնը իմ յիշեցումն է «Շուէյքի արկածներին» լէտտանու Լուրաշիմ, որը, Աւստրո - հունգարական կայսրութեան պայմաններում, ասում է. «Սենք բոլորս էլ չէին ենք, բայց մարդու բան չասեք»: Իրեն բուն էր, թէ չէին ժողովուրդը ընդառա-կում գործող կազմակերպութիւն է, որի մասին բարձրա-ձայն խօսել չի կարելի: Հիմա էլ նուրը մեզ մօտ է գի-տուցը, Յեղասպանութիւնը պէտք է ճանաչեն, բայց եկեք մարդու բան չասենք: Ինչո՞ւ: Մրանցից աւելի նուստա-ցուցիչ բան չկալ. երբ չես կարողանում բարձրաձայն խօ-սել թո ցանկ մայի:

Մի կենցաղային համեմատութիւն անեն. վերքեր կորցրել եմ շատ քանկ մարդու Լնցիս ու պատկերացը-նում էք իմն ստիպեն չխօսել իմ ցաւի մասին: Սրանից աւելի նուստա փիճակ կարելի՞ է պատկերացնել: Միլիո-նաւոր մարդիկ են կուտորուել, ի՞նչպէս չխօսենք այդ մա-սին, ինչի՞ է ամօք: Ամօք է, երբ չես խօսում ու գլուխդ կախում ես վիրաւորական է, որ այս հարցը փիճակման առարկայ են դարձնում ներսում, մինչդեռ ընդհանրա-պէս բննարկման առարկայ պէտք չէ լինել:

Հ. - Վերքերս Փարիզի դատարանը պատմաբան Ռոժէ Կարտեհին 120 հազար ֆրանք տուգանքի ենթարկեց նացիական վարչակարգի յանցագործութիւնները ժխտելու համար: Նպատակադրար չէ՞ արդե՛տք, որ նմանա-տիպ մի արգել էլ մեզանում սահմանենք, որպէսզի ի վերջոյ հնարաւոր լինի կանխարգելել ամեն ինչ արժեզոր-կելու, պետական, ազգային շահերը, նպատակները կար-կաբեկելու, սեւացնելու այս արատաւոր գործընթաց:

Պ. - Դրա համար Ասահմանադրութեան մէջ նախեստաց պէտք է յստակ ամրագրենք մեր ազգային շահերն ու նպատակները: Եթէ Ասահմանադրութեան մէջ ամ-րագրենք, որ մեր պետութեան նպատակներից մէկը հայ ժողովրդի 1915 թուականի Յեղասպանութեան միջազգա-յին ճանաչումն է հասնել էւ ու դրանից յետոյ մի որեւէ կազ-մակերպութիւն պայքար ծաւալի դրա դեմ, ապա բնական է, որ այդ գործունեութիւնը կը դիտուի որպէս հակասահ-մանադրական դրանց բխող բոլոր հետեւանքներով: Բայց քանի որ դեռ ինքնքու չենք ամրագրել, ապա իրա-ւական ինքնքր չկան: Ասահմանադրութեան Հ. Յ. Գ. նա-խագծում շատ կա ձեւակերպում էինք գտել, որը 2-3 ամսուան շախտատման արդիւնք էր. այն բաղկացած էր երկու յօդուածից, ինչը շարադրուած էր «Հայ Դատ» կիսի ներքոյ. «1. Հայ ժողովրդի համազգային շահերը ուսնա-հարող եւ Հայաստանի սահմանադրութեանը հակասող բոլոր միջազգային պայմանագրերը, աքթերը եւ միւս փաստաթղթերը անվավեր են զուտ իրատարածական ու-ժից: 2. Պետութիւնները, համաշխարհային հանրութիւն եւ այն ներկայացուցիչ Միացեալ Ազգերի Կազմակերպու-թիւնը միջազգային իրաւունքի հանրամասն կանոննե-րի պահանջներին, Միացեալ Ազգերի Կազմակերպու-թեան կանոնադրութեան նպատակներին են սկզբունքներ:

«Հայոց Աշխարհ»

Ճառ.՝ էջ 6

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔՈՆԿՐԵՍՍՎԱՆՆԵՐԸ ԵՒ ՉԵՉԻՆ ՀՐԱՄԱՆԱՍԱՐՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՅՆՈՒՄ ԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Նախագահ Հայտար Ալիեւի հայրենիք վերադարձը ըն-լորովին էլ չհանդարտեցրեց Ազրպէյճանի ներքաղաքա-կան կրքերը: Միացեալ Նահանգների Քոնկրետի Ներկա-յացուցիչների Տան միջազգային հարցերով յանձնաժո-ղովու անցնող շարքը ընդունեց թիւ 382 բանաձեւը, որ-տեղ Պաքուի իշխանութիւնների կողք էր արում Նոյեմ-բերի 5ին երկրում անցկացնել ազատ եւ ժողովրդավա-րական ընտրութիւններ, բանակցութիւններ սկսել ընդդի-մադիր կուսակցութիւնների հետ, հուսասար պայմաններ ստեղծել ընտրութիւնների մասնակցի բոլոր քաղաք-ական ուժերի եւ պատգամատրական թեկնածուների հա-մար: Յանձնաժողովը գտնացրել է, թէ Ազրպէյճանի ընդ-դիմադիր կուսակցութիւններին խորհրդարանական ընտ-րութիւններին մասնակցելու իրաւունքից զրկելու դէպ-քում ընտրութիւնների արդիւնքները միջազգային հան-րութեանը վստահութիւն չեն ներշնչի:

Ազրպէյճանի ընդդիմադիր կուսակցութիւնները Ներ-կայացուցիչների Տան թիւ 382 բանաձեւը որակել են ար-դար, բայց ուշացած: Հայտար Ալիեւը բանաձեւին չի ար-ձանագծել, սակայն 6 Դեկտեմբերին նրա հրամանագրով ազրպէյճանական բանտերից ազատ են արձակուել 60 քաղաքաճարակալներ: Այս ձեւով Ալիեւը փորձում է ցոյց տալ Միացեալ Նահանգներին, թէ Ազրպէյճանը բռնել է ժողովրդավարութեան ճանապարհը: 6 Դեկտեմբերին կա-լանքից ազատ է արձակուել նաեւ «Ենի Սուսուաթ» թեր-թի խմբագիր Ռաուֆ Արիֆօղլուն, որը մեղադրում է Նա-խիջեւան - Պաքու օղակապ գաութելու փորձի, ահաբեկ-չութիւն եւ խռովութիւն կազմակերպելու յանցանքներով: Դատախազութիւնը Արիֆօղլուի նկատմամբ մեղադրանք-ները չի բեկանել, իսկ ընդդիմադիր խմբագիրը կալան-քից ազատ է արձակուել քաղաքից չբացակայելու ստո-րագրութեամբ:

Թիւ 382 բանաձեւի առնչութեամբ Միացեալ Նահանգ-ներում Ազրպէյճանի ղեկավար Հաֆիզ Փաշաեւը «էյ. ԵՆ. ԵՍ.» գործակալութեանը տուած հարցազրույցում ասել է. «Քոնկրետը, ցանկացած երկրի ընտրութիւններից առաջ, որտեղ Միացեալ Նահանգներն ունի շահեր, որոշումներ է ընդունում: Ամերիկայի հայկական լուպիս լու

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐԵՂԱԿՆԱՅԻՆ ԶԵՐՄՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՆԱՔԱՐԵՐԸ ԴԵՊԻ ԵՐԿՐԱԳՈՒՆԴ ԿԸ ՄԴԵ

Գիտնականները նորագոյն յայտնաբերումները ցոյց տուած են, թէ երկնաքարերու ուղին աւելի կ'ազդուի արեւէն, քան անջրպետային բախումներէ:

Թէ ինչպէս երկնաքարեր կամ աստեղակերպերու ընկերներ երկրագունդին հետ բախում կ'ունենան, գիտական բանավէճի նիւթ է շուրջ 200 տարիէ ի վեր:

Նախկին տեսութեան համաձայն, աստեղակերպեր, որոնք Հրատի եւ Լուսնի միջև գտնուող մէջ կ'ընդհանուրեն, իրարու կը բախին՝ երկնաքարեր արձակելով դէպի նշեալ գոտիին կարգ մը շրջանները:

Այդ շրջաններուն մէջ Լուսնի միջև եւ Երեւակի ձգողական դաշտերը կ'ազդեն երկնաքարերուն վրայ՝ զանոնք զրկելով դէպի նոր ուղիներ, որոնք կրնան հանդիպիլ երկրագունդին:

Սակայն Փաուլո Ֆարինելլա եւ Տէյվիտ Վոքսընը իր «Նոյնը» թերթի Հոկտեմբերի համարին մէջ կ'ըսեն, թէ աստեղակերպային գոտիին մէջ աստեղակերպերու ընկերներու տարբեր համեմատութիւններով ջերմացումը եւ ջերմութեան արձակումը զանոնք ժամանակի ընթացքին կը զրկէ դէպի այլ գոտիին տարբեր շրջաններ:

Իտալիոյ Թրիեսթէ համալսարանի դասախօսներէն Ֆարինելլա եւ Փրակայի Չարլզ համալսարանին դասախօսներէն Վոքսընը Վոքսընը Վոքսընը կ'ըսեն, թէ ջերմութեան տարբերութիւններ, որոնք Եարթօվալի ուժեր կը կոչուին, կրնան լացատրել երկնաքարերու տարիքին եւ ծնունդին կապուած հարցեր, որոնք մինչեւ հիմա չփոթի կը մասնէին գիտնականները:

Եթէ բախումի տեսութիւնը նկատի առնուի, ատիկա պիտի ենթադրէ, որ աստեղակերպի ընկեր մը դէպի երկրագունդ ուղղուող ճամբայ մը պիտի լինէ եւ համեմատաբար երիտասարդ երկնաքարի մը պիտի յանգի: Այսուհանդերձ, երկրագունդին վրայ գտնուած երկնաքարերու ուսումնասիրութիւնը ցոյց տուած է, թէ անոնք շատ աւելի տարեց են, քան բախումի «մուտք»-ին ցուցարեւած տարիքը:

Եարթօվալի ուժերը աստեղակերպային ընկերներու տանեակ միլիոնաւոր տարիներու ընթացքին աստիճանական շարժումը կը պատճառեն դէպի աստեղակերպային գոտիի այլ վայրեր եւ կը լացատրեն, թէ ինչո՞ւ երկնաքարերը շատ աւելի տարեց են, քան բախումներու «մուտք»-ներու հիմամբ ցուցարեւած տարիքները:

ԵՐՈՍ ԱՍՏՂԱԿԵՐՊՈՒ ԱՐԵՂԱԿՆԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԷՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԷՆ ՄԵՎԸ

Էրոս աստեղակերպը հաւանաբար արեգակնային դրուժեան ամէնէն նախնական մարմիններէն մէկն է եւ աստղագէտներու կրնայ տեղեկութիւններ հայթաղթել երկրագունդին եւ ժայռային այլ մոլորակներու կազմութեան մասին, կ'ըսեն գիտնականները:

Փետրուարէն ի վեր ամերիկեան «Նիւ» (Էն. Ի. Եյ. Ար.) անըպետանաւ կը դառնայ երկրագունդի ծիրէն անցնող աստեղակերպերէն ամէնէն մեծին՝ էրոսի շուրջ եւ օրական հերթականութեամբ կը նկարէ զայն: Անոր վրայ գտնուող սարքերու օգտագործումով հետազոտողներ գտած են, թէ էրոս հաւանաբար 4,55 միլիարտ տարեկան է: Երկրագունդը կը գնահատուի 4,50 միլիարտ տարեկան:

Գիտնականները «Սայրուս» թերթին Սեպտեմբերի համարին մէջ կ'ըսեն, թէ էրոս հաստատուած ժայռ մըն է եւ ո՛չ անջրպետային «աղբերու» կուտակում մը, ինչպէս է պարզուած կարգ մը այլ աստեղակերպերու:

«Նիւ»-ի առաջնութեան գիտնականներէն Անտրու Չէնկ կը յայտնէ, թէ նշեալ տեղեկութիւնը օգտակար է անոնց համար, որոնք աստեղակերպեր կը հետապնդեն եւ կ'ուսումնասիրեն կանխարկիւ անջրպետային հսկայ ժայռի մը հետ երկրագունդային որեւէ բախում:

Ճոնզ Հոփքինզ համալսարանի գիտնականներէն Չէնկ կ'ըսէ, որ աստեղակերպի մը հաստատուած կամ «թռչ» ըլլալու հարցը շատ կարեւոր է, եթէ կ'առաջադրուի գայն մէկ կողմ հրել երկրագունդին հետ բախում մը արգիլելու համար:

Էրոս անջրպետային իմաստով երկրագունդին շատ մօտ է՝ անշուշտ ասիկա համեմատական է. երբ աստեղակերպը ամէնէն մօտիկն է երկրագունդին, անիկա շուրջ 13 միլիոն քմ. հեռաւորութեան վրայ կը գտնուի մեր մոլորակէն:

«Նիւ»-ի անըպետանաւ էրոսի մակերեսին վրայ էջք պիտի կատարէ յառաջիկայ Փետրուարին՝ շարունակելով գայն նկարել:



Էրոս աստեղակերպը, որ գտնուած է 1898ին, կարողութիւն ունի մեր մոլորակին հետ բախուիլ, թէ ըստ գիտական գնահատումներու, նման բախում մը աւելի քան 100 հազար տարին անգամ մը կրնայ պատահիլ: 33 քմ. երկարութեամբ է 13 քմ. լայնքով այս մեծ ժայռ Սայրուսի քմ վեր աւելի ճաճօք կը դառնայ գիտնականներուն շնորհիւ «Նիւ» անըպետանաւուն:

ՏԵՂԵԿՎՈՐ ՄԸ ԱՍՏՂԱԿԵՐՊԵՐԷ ԱՄԵՆԷՆ ԼԱԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ

Բրիտանացի գիտնականներ Սեպտեմբերին կը յայտնէին, թէ ժամանակը հասած է քայլերու զիմելու՝ երկրագունդը պաշտպանելու համար աստեղակերպային մեծ հարուածէ մը:

«Ռոյթը» Ապրիլինսթրիք Սոսայթի»-ի նախկին նախագահ՝ փրոֆ. Տէյվիտ Ուիլիամզ, կ'ըսէ, թէ այդ բախումները յաճախակի չեն, սակայն անոնց հետեանքները շատ մեծ են:

Ուիլիամզ եւ երկրագունդի մօտակայ մարմիններու հսկող խմբակի մը այլ անդամները կը ռուզուած են Բրիտանիոյ, որ զլիսաւորէ միջազգային ճիգեր՝ գիտատեղերու եւ աստեղակերպերու հսկելու համար, որպէսզի կարելի ըլլայ աղիտալի բախումի մը վտանգը նուազեցընել, նկատի ունենալով, որ անիկա միլիոնաւոր զոհեր կ'ընայ խելը:

Կ'առաջադրուի ունենալ կանխահաս գոլուշացման դրութիւն մը, որուն «սիրտը» պիտի ըլլայ հարաւային կիսագունդին մէջ կառուցուելիք աստղադիտակ մը՝ հսկելու համար աւելի փոքր մարմիններու, քան այն մարմինները, որոնք սովորաբար այլ աստղադիտակներու կողմէ հսկողութեան առարկայ են:

Աստղադիտակը շուրջ 21 միլիոն տոյր պիտի արժէ, իսկ ամրող ծրագիրը, որ կ'ենթադրէ այլ աստղադիտակներու, անջրպետային առաջնութիւններու, հսկողութեան եւ աստեղակերպէ պաշտպանութեան կեդրոնի մը օգտագործումը, կրնայ միլիաւոր տոլարներ արժէլ:

«ԱՆՍԱՆՁ» ՄՈՂՈՐԱԿՆԵՐՈՒ 3ԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ՄԸ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ՓՈԽԵԼ

